



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Քաղաքացիական գործ ԸԻԴ 0662/02/13թ.
Նախագահող դատավոր՝ Հ.Գրիգորյան
դատավորներ՝ Ն.Գրիգորյան
Կ.Սադյան

Քաղաքացիական գործ ԸԻԴ 0662/02/13թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ք.Ստեփանակերտ

16-ին ապրիլի 2015թ.

ԼՂՀ Գերագույն դատարանը (այսուհետ՝ Գերագույն դատարան)
վճռաբեկության կարգով

նախագահությամբ դատավոր՝ Գ.Արզումանյանի
դատավորներ՝ Գ.Գրիգորյանի
Ա.Աբրահամյանի

դռնբաց դատական նիստում քննելով ըստ հայցի Վլադիմիր Շահենի Բաղասյանի ընդդեմ Ժենյա Սարգիսի Բաղասյանի, Սոնյա Շահենի Ավանեսյանի, Լիդա Շահենի Սարգսյանի, Օքսանա Լևոնի Բաղասյանի, ԼՂՀ ԱՆ Ստեփանակերտի նոտարական տարածքի թիվ 1 և թիվ 2 նոտարական գրասենյակների նոտարների, ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ աշխատակազմի՝ իր հոր մահից հետո բացված ժառանգության՝ Ստեփանակերտ քաղաքի Վ. Համբարձումյան նրբանցք թիվ 9 /նախկինում՝ Լ.Հուրունցի փող. թիվ 1ա/ հասցեում գտնվող անշարժ գույքի 1/2 մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու և կից 600 քառ.մ հողամասի 1/2 մասի նկատմամբ ժառանգությունն ընդունած ժառանգ ճանաչելու, ինչպես նաև 1995թ. հուլիսի 18-ի՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-66 մատյանի 141110 համարի տակ Ժ.Բաղասյանի և Օ.Բաղասյանի միջև 2012թ. ապրիլի 19-ին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագիրը և ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական թիվ 4-66 մատյանի 141110 համարի տակ Օ.Բաղասյանի անվամբ 2012թ. մայիսի 21-ին կատարած գրանցումը մասնակի՝ 1/2 մասով անվավեր ճանաչելու պահանջների մասին քաղաքացիական գործով ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թ. փետրվարի 19-ի որոշման դեմ պատասխանող Օ.Բաղասյանի վճռաբեկ բողոքը,

Պ Ա Ր Ձ Ե Ց

1. Գործի դատավարական նախապատմությունը.

Դիմելով դատարան՝ Վ.Բադասյանը խնդրել է Ստեփանակերտ քաղաքի Վ.Համբարձումյան նրբանցքի թիվ 9 /նախկինում՝ Լ.Հուրունցի փողոցի 1ա/ հասցեում գտնվող բնակելի տան և կից 600 քառ. մ հողամասի 1/2 նկատմամբ իրեն ճանաչել ժառանգությունն ընդունած ժառանգ, ինչպես նաև մասնակի՝ բնակելի տան և հողամասի 1/2 մասով, անվավեր ճանաչել 1995թ. հուլիսի 18-ին Ժ.Բադասյանին տրված թիվ 1-1543 ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը, ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-66 մատյանի 141110 համարի տակ Ժ.Բադասյանի անվամբ 2012թ. ապրիլի 6-ին կատարած գրանցումը, 2012թ. ապրիլի 19-ին Ժ.Բադասյանի և Օ.Բադասյանի միջև կնքված բնակելի տան նվիրատվության պայմանագիրը և ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ միասնական 4-66 մատյանի 141110 համարի տակ 2012թ. մայիսի 21-ին Օ.Բադասյանի անվամբ կատարած գրանցումը:

ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստիճանի դատարանը /այսուհետ՝ նաև Դատարան/ 2013թ. օգոստոսի 22-ի որոշմամբ Սնեժանա, Արեգա, Վիկտորիա Լևոնի Բադասյաններին և Լենուրա Երվանդի Բադասյանին սույն քաղաքացիական գործով ներգրավել է որպես վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջ չներկայացնող երրորդ անձինք՝ պատասխանողի կողմում:

Դատարանը 2013թ. դեկտեմբերի 27-ի վճռով հայցը մերժել է:

Դատարանի նշված վճռի դեմ վերաքննիչ բողոք է բերել հայցվորի ներկայացուցիչ Վ.Հայրապետյանը:

ԼՂՀ վերաքննիչ դատարանը /այսուհետ՝ նաև Վերաքննիչ դատարան/ 2014թ. փետրվարի 10-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունել է վարույթ և նշանակել դատական քննության 2014թ. փետրվարի 21-ին:

Վերաքննիչ դատարանի 2014թ. փետրվարի 21-ի նիստին պարզ է դարձել, որ հայցվոր Վ.Բադասյանը մահացել է 2014թ. փետրվարի 18-ին՝ հիվանդության պատճառով:

Վ.Բադասյանի մահվան կապակցությամբ, Վերաքննիչ դատարանը 2014թ. փետրվարի 21-ի որոշմամբ քաղաքացիական գործի վարույթը կասեցրել է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ կետի հիմքով:

Հայցվոր Վ.Բադասյանի դուստրը՝ Ա.Ղազարյանը, 2015թ. հունվարի 19-ին դիմել է Վերաքննիչ դատարան, խնդրելով վերսկսել կասեցված գործի վարույթը, որոշում կայացնել կողմի փոխարինման մասին, իրեն ներգրավել որպես հայցվոր:

Վերաքննիչ դատարանը 2015թ. հունվարի 21-ի որոշմամբ սույն քաղաքացիական գործի վարույթը վերսկսել է՝ ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 98-րդ հոդվածի հիմքով: Վ.Բադասյանի առաջին հերթի ժառանգ հանդիսացող Ա.Ղազարյանը սույն գործով ներգրավվել է որպես հայցվոր:

Վերաքննիչ դատարանը 2015թ. փետրվարի 19-ի որոշմամբ վերաքննիչ բողոքը մասնակիորեն բավարարել է. ԸԻԴ 0662/02/13թ. քաղաքացիական գործով Դատարանի 2013թ. դեկտեմբերի 27-ի վճիռը մասնակիորեն բեկանել և փոփոխել է: Հայցը բավարարել է մասնակիորեն՝ Վ.Բադասյանը ճանաչվել է Ստեփանակերտ քաղաքի Վ.Համբարձումյան նրբանցքի թիվ 9 /նախկին՝ Լ.Հուրունցի 1ա/ հասցեում գտնվող անշարժ գույքի՝ 0.0600 հա մակերեսով տնամերձ հողամասի ու դրա վրա կառուցված 125.35 քառ. մ մակերեսով բնակելի տան 1/4 մասն ընդունած ժառանգ:

Ստեփանակերտ քաղաքի Վ.Համբարձումյան նրբանցքի թիվ 9 /նախկին՝ Լ.Հուրունցի 1ա/ հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ 1995թ. հուլիսի 18-ին Ստեփանակերտի առաջին պետական նոտարական գրասենյակի ավագ պետական նոտարի կողմից Ժ.Բաղասյանին տրված ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագիրը մասնակի՝ 1/4 մասով, ճանաչվել է անվավեր:

Ստեփանակերտ քաղաքի Վ.Համբարձումյան նրբանցքի թիվ 9 /նախկին՝ Լ.Հուրունցի 1ա/ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ Ժ.Բաղասյանի և Օ.Բաղասյանի միջև 2012թ. ապրիլի 19-ին կնքված նվիրատվության պայմանագիրը մասնակի՝ 1/4 մասով, ճանաչվել է անվավեր:

Ստեփանակերտ քաղաքի Վ.Համբարձումյան նրբանցքի թիվ 9 /նախկին՝ Լ.Հուրունցի 1ա/ հասցեում գտնվող անշարժ գույքի նկատմամբ ԼՂՀ ԿԱ ԱԳԿՊԿ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման միասնական 4-66 մատյանի 141110 համարի տակ 2012թ. մայիսի 21-ին Օ.Բաղասյանի սեփականության իրավունքի գրանցումը մասնակի՝ 1/4 մասով, ճանաչվել է անվավեր:

Վերաքննիչ դատարանի նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է բերել պատասխանող Օ.Բաղասյանը:

Վճռաբեկ բողոքին պատասխան չի ներկայացվել:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, հիմնավորումները և պահանջը.

Սույն վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերողը գտնում է, որ Վերաքննիչ դատարանը խախտել է ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածը, իրավահարաբերության պահին գործող քաղաքացիական օրենսգրքի 87-րդ հոդվածի 1-ին մասը, 549-րդ հոդվածը:

Նշված պնդումները բողոք բերողը հիմնավորել է հետևյալ պատճառաբանություններով.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի:

Դատարանը վճռի հիմքում դրված եզրահանգումները պարտավոր է գնահատել, հետազոտելով գործում առկա բոլոր ապացույցները, հաշվի առնելով կողմերի բացատրություններն ու դիրքորոշումը:

Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ սույն գործով ժառանգատուի ըստ օրենքի ժառանգներն են հանդիսանում կինն ու չորս զավակները, որ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ժառանգներից ոչ ոք ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին չի հայտարարել ժառանգությունն ընդունելու մասին: Ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում ժառանգներից երկուսը՝ ժառանգատուի կինը՝ Ժ.Բաղասյանը և զավակը՝ Վ.Բաղասյանը, փաստորեն սկսել են տիրապետել և կառավարել ժառանգական անշարժ գույքը՝ շարունակելով փաստացի բնակվել այնտեղ: Վերաքննիչ դատարանն արձանագրել է, որ գործում առկա չեն տեղեկություններ՝ ըստ օրենքի ժառանգ Վ.Բաղասյանի կողմից ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում իրեն հասանելիք ժառանգությունից հրաժարվելու մասին:

Դատարանը նշել է, որ 1995թ. հուլիսի 18-ին ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին գրավոր դիմում ներկայացնելիս, Մ.Բադասյանը նոտարական մարմնին չի հայտնել այն մասին, որ իրենից բացի տվյալ անշարժ գույքի նկատմամբ կան նաև այլ ըստ օրենքի ժառանգներ:

Վերաքննիչ դատարանն ապացուցված է համարել, որ Վ.Բադասյանը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ընդունել է իր հոր թողած ժառանգության՝ անշարժ գույքում նրա ունեցած 1/2 բաժնեմասի 1/2-ը, կամ որ նույնն է՝ ամբողջ անշարժ գույքի 1/4 մասը:

Նախկինում գործող քաղաքացիական օրենսգրքի 535-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված է, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում հավասար բաժիններով առաջին հերթի ժառանգներ են հանդիսանում՝ մահացածի զավակները, ամուսինն ու ծնողները...:

Նույն օրենսգրքի 549-րդ հոդվածում սահմանված է, որ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Ժառանգությունը ժառանգի կողմից փաստացի ընդունված է համարվում, երբ նա սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին: Նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում: Ժառանգության ընդունման նմանատիպ կարգավորում է նախատեսում նաև ներկայումս գործող ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը:

Բողոքաբերը գտնում է, որ ժառանգության ընդունումը ժառանգի կողմից իրականացվող կանխամտածված, ակտիվ գործողությունների համակցություն է, որն ուղղված է ժառանգական գույքն իր սեփականությունը դարձնելուն: Այսինքն, ժառանգության ընդունման դեպքում ժառանգը պետք է գիտակցի և նրա գործողությունները պետք է նպատակաուղղված լինեն համապատասխան ժառանգության ընդունմանը: Ժառանգի կողմից ժառանգությունն ընդունած կամ չընդունած լինելու փաստի գնահատման հարցում էական նշանակություն ունի այն հանգամանքը, թե առկա է, արդյոք, ժառանգի կամքը և ցանկությունը՝ ուղղված ժառանգության ընդունմանը և, արդյոք, ժառանգությունն ընդունելու համար ժառանգն օրենքով սահմանված ժամկետում կատարել է ժառանգատուի գույքի փաստացի տիրապետմանն ու կառավարմանն ուղղված ակտիվ գործողություններ՝ կոնկրետ նպատակ ունենալով իր տիրապետման տակ վերցնելու ժառանգական գույքը:

Բողոքաբերը պնդում է, որ Վ.Բադասյանը տեղյակ էր իր մոր կողմից նվիրատվություն կատարելու մասին, սակայն չի առարկել և իր վկայակոչած փաստերն ապացուցելու համար որևէ ապացույց չի ներկայացրել:

Վերաքննիչ դատարանը հաստատված է համարել, որ հայցվորն իր ժառանգման իրավունքի խախտման մասին իմացել է 2012 թվականի ապրիլին, ուստի գտել է, որ Դատարանի կողմից սույն գործով հայցային վաղեմությունը կիրառելն ու հայցն այդ հիմքով մերժելն անհիմն է:

Բողոքաբերը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի նման եզրահանգումն անհիմն է, քանի որ Վ.Բադասյանն իմացել է վիճելի տան՝ իր մոր անունով ձևակերպելու գործընթացի մասին:

Ըստ բողոք բերողի՝ Վերաքննիչ դատարանը խախտել է «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին»

եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածով ամրագրված անձի արդար դատաքննության իրավունքը:

Բողոք բերողը գտնում է, որ սույն գործով Վերաքննիչ դատարանի կողմից թույլ տրված դատական սխալի արդյունքում ինքն անհիմն կերպով զրկվել է սեփականությունից:

Խնդրում է մասնակիորեն բեկանել Վերաքննիչ դատարանի 2015թ. փետրվարի 19-ի որոշումը և օրինական ուժ տալ ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին աստյանի դատարանի 2013թ. դեկտեմբերի 27-ի վճռին:

3. Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.

Վճռաբեկ բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Շահեն Բադալյանն ու Ժենյա Բադալյանը /Պետրոսյանը/ ամուսնացել են 1952թ. հուլիսի 16-ին: Ամուսնական կյանքից ունեցել են չորս երեխա՝ Վլադիմիր, Լևոն, Սոնյա և Լիդա Շահենի Բադալյանների:

2. Ըստ 1992թ. հունիսի 12-ի II-ՇՄ N 366106 մահվան վկայականի՝ Շահեն Բադալյանը մահացել է 1992թ. հունվարի 27-ին: Շ.Բադալյանը կտակ չի կազմել:

3. 1995թ. հուլիսի 18-ի ըստ օրենքի ժառանգության վկայագրի համաձայն՝ 1992թ. հունվարի 27-ին մահացած Շահեն Բադալյանի գույքը՝ Ստեփանակերտ քաղաքի Հուրունցի 1ա հասցեում գտնվող բնակելի տունը, ժառանգել է կինը՝ Ժենյա Բադալյանը:

4. ԼՂՀ զինվորական կոմիսարի կողմից տրված տեղեկանքի համաձայն՝ Վլադիմիր Բադալյանը հանդիսանում է երրորդ խմբի հաշմանդամ, հիմք՝ 1995թ. մարտի 16-ի թիվ 300189 վկայականը:

5. Ըստ Ստեփանակերտի քաղաքապետի 2012թ. մարտի 21-ի որոշման՝ Շ.Բադալյանին պատկանող Լ.Հուրունցի 1ա հասցեում գտնվող բնակելի տունը վերահասցեավորվել է և ստացել Համբարձումյան նրբանցքի թիվ 9 նոր հասցե:

6. 2012թ. ապրիլի 6-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 119433 վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Համբարձումյան նրբանցքի թիվ 9 բնակելի տան նկատմամբ գրանցված է Ժենյա Բադալյանի սեփականության իրավունքը: Հիմք՝ 1995թ. հուլիսի 18-ի ըստ օրենքի ժառանգության վկայագիրը և Ստեփանակերտի քաղաքապետի 2012թ. մարտի 21-ի որոշումը:

7. Ըստ 2012թ. ապրիլի 19-ի՝ Ժենյա Բադալյանի և Օքսանա Բադալյանի միջև կնքված թիվ 1127 նվիրատվության պայմանագրի՝ Ժենյա Բադալյանը /նվիրատու/ Օքսանա Բադալյանին /նվիրառու/ սեփականությանն անհատույց հանձնել է Ստեփանակերտ քաղաքի Համբարձումյան նրբանցքի թիվ 9 հասցեում գտնվող բնակելի տունը:

8. 2012թ. մայիսի 21-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման թիվ 120081 վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Համբարձումյան նրբանցքի թիվ 9 հասցեում գտնվող բնակելի տան նկատմամբ գրանցվել է Օքսանա Բադալյանի սեփականության իրավունքը: Հիմք՝ թիվ 1127 նվիրատվության պայմանագիրը:

9. Ըստ 2014թ. մարտի 6-ի թիվ 135521 մահվան վկայականի՝ Վլադիմիր Բադալյանը մահացել է 2014թ. փետրվարի 18-ին:

4. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Քննելով վճռաբեկ բողոքը նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում, Գերագույն դատարանը գտնում է, որ այն հիմնավոր է և ենթակա է մասնակիորեն բավարարման, իսկ դատական ակտը՝ բեկանման, հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 252-րդ հոդվածի համաձայն՝ վճռաբեկության կարգով գործի քննության ժամանակ Գերագույն դատարանը գործով կայացված դատական ակտը վերանայում է միայն վճռաբեկ բողոքի հիմքերի և հիմնավորումների սահմաններում:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 49-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը յուրաքանչյուր ապացույց գնահատում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ: Դատարանի համար որևէ ապացույց նախապես հաստատվածի ուժ չունի...: Վերը նշված նորմերի վերլուծությունից հետևում է, որ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստերի հաստատված լինելու հարցը դատարանը պարզում է գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված ներքին համոզմամբ: Ընդ որում, գործին մասնակցող յուրաքանչյուր անձ իր կողմից վկայակոչած փաստերը հիմնավորելու համար պարտավոր է ներկայացնել այդ փաստերը հիմնավորող ապացույցներ:

«ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ԼՂՀ-ում կիրարկման մեջ դնելու մասին» ԼՂՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ օրենսգիրքը կիրառվում է քաղաքացիական այն իրավահարաբերությունների նկատմամբ, որոնք ծագել են օրենսգիրքը գործողության մեջ դնելուց հետո՝ բացառությամբ նույն օրենքով նախատեսված դեպքերի: Նույն օրենքի 17-րդ հոդվածի համաձայն՝ Քաղաքացիական օրենսգրքի տասնմեկերորդ բաժնի նորմերը կիրառվում են նաև այն ժառանգությունների նկատմամբ, որոնք բացվել են մինչև օրենսգիրքը գործողության մեջ դնելը, սակայն չեն ընդունվել ժառանգներից ոչ մեկի կողմից և ժառանգման իրավունքով պետության կամ համայնքի սեփականությունը չեն դարձել մինչև 2001թ. հուլիսի 1-ը:

Սույն գործով հաստատված է, որ Շ.Բադալյանը մահացել է 1992թ. և իր գույքի վերաբերյալ կտակ չի կազմել, ուստի բացվել է ըստ օրենքի ժառանգություն:

Գերագույն դատարանը հիմնավոր է համարում Վերաքննիչ դատարանի /նաև Դատարանի/ եզրահանգումն այն մասին, որ սույն գործով կիրառելի է նախկինում գործող ՀԽՍՀ 1964 թ. քաղաքացիական օրենսգիրքը:

Նշված օրենսգրքի 549-րդ հոդվածի համաձայն՝ ժառանգությունը ձեռք բերելու համար ժառանգը պետք է ընդունի այն: Չի թույլատրվում ժառանգության ընդունումը պայմանով կամ վերապահումներով: Ժառանգությունը ժառանգի կողմից ընդունված է համարվում, երբ նա փաստորեն սկսում է տիրապետել կամ կառավարել ժառանգական գույքը, կամ երբ նա ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարել է ժառանգությունն ընդունելու մասին: Այս հոդվածում նշված գործողությունները պետք է կատարվեն ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում:

Նշված հոդվածի մեկնաբանությունից հետևում է, որ օրենսդիրը նախատեսել է ժառանգության ընդունման երկու եղանակ՝ ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին հայտարարելը ժառանգությունն ընդունելու մասին կամ ժառանգական գույքը փաստորեն տիրապետելը կամ կառավարելը, ինչը

հանդիսանում է ժառանգական գույքի նկատմամբ ժառանգի սեփականության իրավունքի ծագման նախապայման:

Գերագույն դատարանը բազմիցս նշել է, որ եթե գործի քննության ընթացքում կողմերից մեկը բարձրացնում է վերը նշված եղանակներից որևէ մեկով ժառանգությունն իր կողմից ընդունելու հարցը, ապա կարևոր է այն իրավական հարցի պարզաբանումը, թե արդյոք անձը փաստացի տիրապետման հիմքով ընդունել է ժառանգությունը, ուստի դատարանում գործի քննության ընթացքում պետք է հիմնավորվի փաստացի տիրապետման հիմքով ժառանգական գույքն ընդունելու փաստը:

Եթե օրենսդիրը դիմում տալու եղանակով ժառանգության ընդունման հատուկ ընթացակարգ է նախատեսել /ժառանգությունն ընդունելը կամ ժառանգության բացման վայրի նոտարական մարմնին վեցամսյա ժամկետում հայտարարելը/, ապա փաստացի տիրապետման կամ կառավարման եղանակով ժառանգության ընդունումը կարող է տեղի ունենալ ժառանգի կողմից տարբեր բնույթի ակտիվ գործողություններ սկսելու հիմքով, որպիսիք ուղղված են ժառանգատուի գույքի փաստացի տիրապետման և կառավարման հնարավորությունների ապահովմանը:

Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում ընդգծել, որ ըստ օրենքի ժառանգման դեպքում ժառանգատուի մահվանից հետո վեցամսյա ժամկետում ժառանգի կողմից ժառանգած գույքի փաստացի տիրապետումն ու կառավարումը՝ գիտակցված, ակտիվ գործողություններ են, որոնք ունեն հստակ նպատակ՝ ուղղված են ժառանգության ընդունմանը: Եթե ժառանգը, գիտակցելով, որ գույքը պատկանել է ժառանգատուին, վերջինիս մահվանից հետո տիրապետում և կառավարում է այդ գույքը, այսինքն կատարում է գիտակցված, ակտիվ գործողություններ, ապա նման գործողությունների կատարումը հանդիսանում է օրենսդրորեն սահմանված ժառանգության ընդունման եղանակներից մեկը: Ընդ որում, ժառանգության ընդունման փաստը հաստատված համարելու համար որևէ նշանակություն չունի այն հանգամանքը, որ ժառանգը գույքը տիրապետել և կառավարել է նաև մինչև ժառանգատուի մահը: Ժառանգման իրավահարաբերությունների առանձնահատկություններով պայմանավորված՝ ժառանգության զանգվածի մեջ մտնող որևէ գույք ժառանգման իրավունք ունեցող անձի փաստացի տիրապետման ներքո կարող է գտնվել նաև մինչև ժառանգության բացումը : Նման պարագայում ժառանգության ընդունման համար էական է այն փաստը, որ ժառանգը ժառանգատուին պատկանող գույքի փաստացի տիրապետման և կառավարման գործողությունները շարունակի նաև ժառանգության բացման պահից հետո վեցամսյա ժամկետում, այսինքն կարևոր է ժառանգի կամքը և ցանկությունը՝ ժառանգության ընդունման վերաբերյալ:

Գերագույն դատարանն իր որոշումներում անդրադարձել է նաև դատական ակտերի իրավական հիմնավորվածության հարցին, նշելով, որ յուրաքանչյուր դեպքում դատարանը պարտավոր է տալ որոշման իրավական և փաստական հիմնավորումները:

Սույն գործով Վերաքննիչ դատարանը վերաքննիչ բողոքը բավարարելիս պատճառաբանել է, որ «Այսպիսով, գործով ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ հաստատվում է, որ ժառանգության բացման օրվանից վեց ամսվա ընթացքում Շ.Բադասյանի ժառանգներից երկուսը՝ նրա կինը՝ Ժ.Բադասյանը ու զավակը՝ Վ.Բադասյանը փաստորեն սկսել են տիրապետել և կառավարել ժառանգական անշարժ գույքը՝ շարունակելով փաստացի բնակվել այնտեղ: Այսինքն՝

Վ.Բաղասյանը փաստացի տիրապետման և կառավարման եղանակով ընդունել է իր հոր թողած ժառանգության՝ անշարժ գույքում նրա ունեցած 1/2 բաժնեմասի 1/2 մասը, կամ որ նույնն է՝ ամբողջ անշարժ գույքի 1/4 մասը», մասնակիորեն բեկանել և փոփոխել է Դատարանի վճիռը, Վ.Բաղասյանին ճանաչելով վիճելի գույքի 1/4 մասն ընդունած ժառանգ:

Գերագույն դատարանը հիմնավոր չի համարում Վերաքննիչ դատարանի նշված եզրահանգումները և գտնում է, որ Վերաքննիչ դատարանը քննարկման և պատշաճ իրավական գնահատման առարկա չի դարձրել Վ.Բաղասյանի կողմից ժառանգությունն ընդունելուն ուղղված կամքի և կամարտահայտության առկայության հարցը, ինչը սույն վեճի լուծման համար ունի էական նշանակություն:

Սույն գործի փաստերից հետևում է, որ 1995թ. հուլիսի 18-ի ըստ օրենքի ժառանգության վկայագրի համաձայն՝ 1992թ. հունվարի 27-ին մահացած Շահեն Բաղասյանի գույքը՝ Ստեփանակերտ քաղաքի Հուրունցի 1ա հասցեում գտնվող բնակելի տունը, ժառանգել է կինը՝ Ժ.Բաղասյանը, որ 2012թ. ապրիլի 6-ի անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 119433 վկայականի համաձայն՝ Ստեփանակերտ քաղաքի Համբարձումյան նրբ. թիվ 9 բնակելի տան նկատմամբ գրանցված է Ժ.Բաղասյանի սեփականության իրավունքը, որ 2012թ. ապրիլի 19-ի Ժ.Բաղասյանի և Օ.Բաղասյանի միջև կնքված թիվ 1127 նվիրատվության պայմանագրի համաձայն՝ Ժ.Բաղասյանը /նվիրատու/ Օ.Բաղասյանին /նվիրառու/ սեփականությանն անհատույց հանձնել է Ստեփանակերտ քաղաքի Համբարձումյան նրբ. թիվ 9 հասցեում գտնվող բնակելի տունը, որի նկատմամբ Օ.Բաղասյանը գրանցել է իր սեփականության իրավունքը, մինչդեռ հայցվորի կողմից ըստ օրենքի ժառանգությունն ընդունելու փաստը հաստատող ապացույցներ, որոնք վկայում են վերջինիս կողմից իր վկայակոչած բաժինը փաստացի տիրապետելու և կառավարելու մասին, որոշման հիմքում չեն դրվել և պատշաճ գնահատման առարկա չեն դարձվել:

Գերագույն դատարանն անդրադառնալով ստորադաս դատարանների կողմից արտահայտված դիրքորոշմանը՝ փաստացի տիրապետման հիմքով ժառանգությունն ընդունելու վերաբերյալ, գտնում է, որ սույն գործով ստորադաս դատարանները գործում առկա բոլոր ապացույցները, գործին մասնակցող անձանց բացատրությունները որպես ապացույց, բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտությամբ չեն գնահատել համակցության մեջ, ինչը հանգեցրել է գործի ըստ էության սխալ լուծման:

Միաժամանակ, Գերագույն դատարանն անհրաժեշտ է համարում արձանագրել, որ Վերաքննիչ դատարանի պատճառաբանությունը՝ սույն գործով հայցային վաղեմության ժամկետի սկիզբը 2012թ. ապրիլ ամսից հաշվարկելու մասին, համարում է անհիմն, քանի որ նշվածը հիմնավորված չէ սույն գործի նյութերով:

Այսպիսով, սույն վճռաբեկ բողոքի հիմքի առկայությունը Գերագույն դատարանը բավարար է համարում Վերաքննիչ դատարանի որոշումը բեկանելու համար:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 240-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմերը համարվում են խախտված կամ սխալ կիրառված, եթե դատարանը՝... 3. սխալ է մեկնաբանել օրենքը կամ ԼՂՀ միջազգային պայմանագիրը կամ իրավական այլ ակտը: Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ նյութական իրավունքի նորմի խախտումը կամ սխալ կիրառումը վճռի բեկանման հիմք է, եթե հանգեցրել է գործի սխալ լուծման:

ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գործն ըստ էության լուծող դատական ակտերի վերանայման արդյունքում Գերագույն դատարանը՝ ամբողջությամբ կամ մասնակիորեն բավարարում է վճռաբեկ բողոքը՝ համապատասխանաբար ամբողջությամբ կամ մասնակիորեն բեկանելով դատական ակտը: Բեկանված մասով գործն ուղարկվում է համապատասխան ստորադաս դատարան՝ նոր քննության՝ սահմանելով նոր քննության ծավալը: Զբեկանված մասով դատական ակտը մնում է օրինական ուժի մեջ:

Այսպիսով, Գերագույն դատարանը գտնում է, որ Վերաքննիչ դատարանի հետևությունները հիմնված չեն գործում առկա ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման և գնահատման վրա, իսկ վճռաբեկ բողոքում բերված փաստարկները գործի ըստ էության ճիշտ լուծման համար ունեն էական նշանակություն, ուստի ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված լիազորության ուժով վճռաբեկ բողոքը պետք է բավարարել մասնակիորեն, իսկ վերանայվող դատական ակտը՝ բեկանել, գործն ուղղարկելով ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

Ելնելով վերոգրյալներից և ղեկավարվելով ԼՂՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 253-256-րդ հոդվածներով՝ Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. Պատասխանող Օքսանա Լևոնի Բաղասյանի վճռաբեկ բողոքը բավարարել մասնակիորեն: Բեկանել ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2015թվականի փետրվարի 19-ի որոշումը և գործն ուղարկել ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան՝ նոր քննության:

2. Դատական ծախսերի հարցին անդրադառնալ նոր քննության արդյունքում:

3. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից՝ վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Գ.ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Գ.ԳՐԻԳՈՐՅԱՆ

Ա.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ